

ԱՄՆ ԱՐԵՖԵԼԵԱՆ ԹԵՄՈՒՄ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ՆԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ «ԱՐԱՐԱՅ» ԿԵԴՐՈՆ»Ի ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Շաբաթ, Յուլիս 24-ին, մօտ 700 ներկաներու մասնակցությամբ պաշտօնապես օրհնուեցաւ եւ բացումը կատարուեցաւ Առաջնորդարանի «Նամագումարի եւ Երիտասարդական «Արարաբ» Կեդրոն»ին, որ կը գտնուի Նիւ Եորք նահանգի Քէյթքիլզ անուանուող լեռներու մօտ:

Նակառակ նախորդ երկու օրերուն րեղացող զօրատր անձրեւին՝ Շաբաթ օրը շաւր գեղեցիկ ու պայծառ օր եղաւ՝ ուրախացնելով հանդիսութիւնը կազմակերպողները:

Երիտասարդական սեփական կեդրոն մը ունենալու գաղափարը աւելի շեշտուեցաւ 2000 թուականի Թեմական Պարագամատրական Ժողովին, ուր այս նպատակին համապատասխան կարգ մը նուիրաբերութիւններ: Կազմուեցաւ մասնատր յանձնախումբ մը, որ յարմար վայրի մը որոնումը կատարեց: Երկար փնտրութիւններ ետք՝ կարելի եղաւ գտնել «Balsam Shade» անունով արդէն իսկ յարմարաւէր վայր մը, որուն արժէքն էր մէկ միլիոն երկու հարիւր հազար փոխար: Այս վայրը ունի 65 արտադար փարածութիւն. եւ ամէն րեսակի յարմարութիւն՝ լողաւազան, թէնիսի դաշտ, 200 սենեակներ, մեծ խոհանոց եւ ճաշարան: Նոյն շրջանին մօտ մէկ միլիոն փոխար հանգանակուեցաւ եւ 2004 թուականի Յունուարին վաճառու ման համաձայնութիւնը կնքուեցաւ:

Մինչեւ բացման թուականը՝ Յանձնախումբի անդամներ, Առաջնորդարանի պաշտօնեաներ եւ բազմաթիւ կամաւորներ, գրեթէ ամէն շաբաթավերջ, այցելեցին Կեդրոնը եւ անհրաժեշտ նորոգութիւնները կատարեցին:

Բացման հանդիսութիւնը սկսաւ Անդաստանի արարողութեամբ, որուն հանդիսապետութեան թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսաման: Ներկայ էին րասնեակ մեծ հոգեւորականներ, սարկաւազներ, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի եւ Ծխական Խորհուրդներու արքեպիսկոպոսներ ու անդամներ եւ բազմաքահարիւր ծխականներ՝ եկած հեռաւոր վայրերէ:

Արարողութեան երգեցողութեան մասնակցեցան Ս. Վարդան ճամբարի ճամբարողները՝ ղեկավարութեամբ խմբավար Խորեն Մէլիսանեանի:

Առաջնորդ Սրբազան Նայրը իր խօսքը սկսաւ նախ շնորհակալութիւն յայտնելով բոլոր ներկաներուն, որոնք եկած էին բաժնելու օրուան ուրախութիւնը, ապա ի մէջ այլոց ըսաւ՝ «Մեր Առաջնորդարանին համար այս օրը բացառիկ օր մըն է: Նոր սկզբնաւորութեան մէջ օրը: Երազներու իրականացման օրը: Խոստումնալից եւ գեղեցիկ ապագայի մը րեսիլիքի օրը: ... Նիմնելով «Արարաբ» Կեդրոնը՝ նոր հորիզոններ կը բացուին մեր Եկեղեցւոյ համար: Ամառնային ճամբարներ, կրօնական առանձնացումներ, երիտասարդական յայտագիրներ եւ այլ ձեռնարկներ պիտի կազմակերպուին այս Կեդրոնին մէջ: ... Փառք կու րանք Աստուծոյ, որ պատասխանեց մեր աղօթքներուն եւ այսպիսի յարմարաւէր Կեդրոն մը շնորհեց:

մեզի»: Այս, առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակալություն յայտնեց թեմական պարզամտորենքուն, ծխականներուն, Յանձնախումբի անդամներուն, Կեդրոնի խորհրդապետ մարմինին, Թեմական Խորհուրդին եւ Առաջնորդարանի պաշտօնէութեան, որոնց ցուցաբերած հասկացողութեամբ եւ աշխատանքով իրականութեան վերածուեցաւ Կեդրոն մը ունենալու երազը:

Արարողութեան ընթացքին՝ Մայր Հայերնիքէն բերուած հողը խառնուեցաւ Կեդրոնի հողին՝ այս ոչ-հայկական հողը վերածելով ազգային սեփական հողի:

Բոլոր ներկաները խանդավառուած էին նոր Կեդրոնի իրականութեամբ եւ իրենց գնահատանքն ու բարեմաղթութիւնները ներկայացուցին: Տեղւոյն վրայ քսանհինգ հազար տոլարի սրտաբոխ նուիրաբոխութիւն կատարուեցաւ:

Ելոյթ ունեցան նաեւ Յանձնախումբի անդամներ, Առաջնորդարանի վարիչ-տնօրէն Տոքթ. Սամ Միքայէլեան եւ կարգ մը ներկաներ:

Օրուան փոսակատարութիւնը ճոխացուցին Ֆիլադելֆիոյ «Հայ Պէնտ»-ը եւ Ալպանիի «Միփան» պարախումբը: Սպասարկուեցան համեղ եւ առաւ օւրելիքներ եւ անուշեղէններ:

Կեդրոնը Առաջնորդարանի սեփականութիւնը ըլլալէն ետք՝ տեղւոյն յարմարութիւնները առաջին անգամ ըլլալով օգտագործեց Ս. Վարդան ճամբարը: Երկու հարիւր ճամբարորդներ եւ անձնակազմ իրարու յաջորդող երկուքական շարքեր մասնակցեցան ճամբարի յայտագիրներուն: Արեւելեան թեմի Դպրաց Դասերու Ընկերակցութիւնը Կեդրոնին մէջ կազմակերպած է չորս օրուան առանձնացում մը՝ Օգոստոս 4-էն սկսեալ: Զանազան կազմակերպութիւններ կը ծրագրեն իրենց յայտագիրները գործադրել նոր Կեդրոնին մէջ:

Տեղին է կրկնել առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի խօսքերը. «Մեր Առաջնորդարանին համար այս օրը բացառիկ օր մըն է: Նոր սկզբնաւորութեան մը օրը: Երազներու իրականացման օրը: Խոստմնալից եւ գեղեցիկ ապագայի մը տեսիլքին օրը»:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ